ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության եկամուտների գնահատման և վերլուծության բաժնի գլխավոր հարկային տեսուչ Գրիգոր Հակոբյանի՝ 2024 թվականի ապրիլի 21-ից մայիսի 4-ը Ավստրիական Հանրապետություն (ք. Վիեննա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Գրիգոր Հակոբյան - ՀՀ ՊԵԿ Զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության եկամուտների գնահատման և վերլուծության բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա, ապրիլի 21-ից մայիսի 4-ը

3. **Հրավիրող կողմը՝**

Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) Վիեննայի համատեղ ինստիտուտ (Joint Vienna Institute)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

«Հարկաբյուջետային շրջանակներ (Fiscal Frameworks)» թեմայով դասընթացի նպատակն է ներկայացնել, թե ինչպես կարելի է մշակել հարկաբյուջետային կանոնները, վերլուծել հարկաբյուջետային կատարողականը, նպաստել միջնաժամկետ բյուջեի ստեղծմանը, որը սահմանափակելու է ռեցեսիան՝ պահպանելով կայունությունը, օգտագործել տվյալները հարկաբյուջետային քաղաքականության գնահատման համար:

Դասընթացը միտված է մասնակիցներին ներկայացնելու հարկաբյուջետային քաղաքականությունը կառավարության հիմնական նպատակներին հասնելու համար՝ մակրոկայունության, արդարության և արդյունավետության և կայուն երկարաժամկետ աճի տեսանկյունից, ինչպես նաև գնահատելու հարկային և ծախսային քաղաքականության հիմնական տարրերը:

5. Քննարկված թեմաները՝

Դասընթացի ժամանակ քննարկվել են հետևյալ հարցերը՝

1) *հարկաբյուջետային շրջանակների կարևորությունը.*

Դասընթացի ընթացքում քննարկվել են հարկաբյուջետային քաղաքականության տվյալների որակը գնահատելու համար քննադատական մոտեցումները, հարկաբյուջետային կանոնների նախագծման աշխատանքները, հարկաբյուջետային կատարողականի համար տարեկան մոնիտորինգի գործիքի կիրառումը և միջնաժամկետ բյուջեի նախագման հետ կապված հարցեր,

2) հարկաբյուջետային վերլուծություն.

Դասընթացի ընթացքում քննարկվել են թե ինչպես կարելի է հասկանալ պարտքի անվանական և շուկայական արժեքների տարբերությունները,

3) հարկաբյուջետային կայունություն և պետական պարտքի կառավարում.

Դասընթացի ընթացքում քննարկվել են հայեցակարգեր և գործիքներ դեֆիցիտի և պարտքի վերաբերյալ, պարտքի և դեֆիցիտի շեմերը և պարտքի կառավարման տարբեր ռազմավարություններ: Դասընթացի ընթացքում կատարվել են պարտքի հաջող կառավարմանը վերաբերող վարժություններ,

4) *հարկաբյուջետային կանոններ.*

Դասընթացի ընթացքում նկարագրվել են հարկաբյուջետային կանոների նախագծման հիմնական տարրերը, ինչպես նաև քննարկվել են հարկաբյուջետային կանոների գործնականում կիրառման վերաբերյալ հարցերը,

5) *հարկաբյուջետային ռիսկերի բացահայտում և կառավարում.*

Դասընթացի ընթացքում քննարկվել են թե ինչպես բացահայտել, վերլուծել և կառավարել հարկաբյուջետային ռիսկերը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների մի քանի օրինակներ,

6) *հարկաբյուջետային թափանցիկություն.*

Դասընթացի ընթացքում քննարկվել են հարկաբյուջետային թափանցիկությանը վերաբերող օրինակներ,

7) *հարկաբյուջետային քաղաքականության փաթեթի կազմում.*

Դասընթացի ընթացքում քննարկվել են հարկաբյուջետային քաղաքականության սահմանափակումները, հարկաբյուջետային ագրեգատների և տնտեսության հետադարձ կապերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում կազմակերպել են խմբային քննարկումներ՝ առաջադրված խնդիրների լուծման նպատակով: Մասնակիցներին տրվել են առաջադրանքներ, որոնք հաջողությամբ հաղթահարվել են դասընթացի շրջանակներում ձեռք բերված գիտելիքների և փորձի հիման վրա:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ իրականացվել են գործնական աշխատանքներ, մասնավորապես՝ վերլուծվել է Ռումինիայի, Սլովակիայի և Լեհաստանի մակրոտնտեսական վերջին զարգացումները, հարկաբյուջետային ռիսկերը և մարտահրավերները, ինչպես նաև վերոնշյալ երկների համար ներկայացվել է հարկայուջետային քաղաքականության առաջարկություններ: Դասընթացի վերջում մասնակիցները բաժանվել են խմբերի, որոնց կողմից պատրաստվել են շնորհանդեսներ՝ Ռումինիայի, Սլովակիայի և Լեհաստանի հարկաբյուջետային շրջանակների վերաբերյալ:

Դասընթացից առաջ և հետո մասնակիցները հանձնել են քննական թեստեր, իսկ վերջում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրվել են հավաստագրեր՝ «Հարկաբյուջետային շրջանակներ (Fiscal Frameworks)» թեմայով դասընթացը հաջողությամբ ավարտելու մասին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի սկզբում և ավարտին մասնակիցներին տրվել է ստուգում-հարցաթերթ, որի արդյունքներով տրվել է դասընթացին բարեհաջող մասնակցության վերաբերյալ հավաստագիր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռնեց ՊԵԿ ներկայացուցչին տեղեկատվություն ստանալ առաջատար երկրների հարկաբյուջետային փաթեթի կազման աշխատանների վերաբերյալ, ինչը անհրաժեշտության դեպքում կարող է կիրառվել ՊԵԿ կողմից կատարվող համապատասխան գործառույթներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

07.05.2024 թ.